ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 133/10

Քաղ.Երեւան **30 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հուլիսի 30-ի նիստում (արձանագրություն N82/2) քննարկեց «FERRERO S.P.A.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի 2010թ. հունիսի 22-ի «TIC TAC 3D» (IR 405177) ծավալային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Հիմք ընդունելով «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 57-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ նիստը ղեկավարեց Բողոքարկման խորհրդի նախագահի կողմից նշանակված Բողոքարկման խորհրդի անդամ՝ Ա. Խաչիկյանը:

Կրկնական փորձաքննության մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաեւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» Կարգի 90.1 կետը, համաձայն որոնց ապրանքային նշանը չի կարող գրանցվել 30-րդ դասի ապրանքների համար, քանի որ չունի տարբերակող հատկություն, այն սովորական տուփի պատկեր է:

Բողոքարկողը որոշման հետ համաձայն չէ, ստորեւ ներկայացվում են բողոքը հիմնավորող փաստարկներ:

Բողոքարկողը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ դրա տարածքից դուրս, այս ապրանքը միշտ վաճառվել է և վաճառվում է հենց հայտարկվող տուփերով: Տուփն ինքնին թեև պարզ կառուցվածքի է, սակայն ունի ակնհայտ տարբերակիչ հատկություններ:

IR 405177 միջազգային հայտով հայտարկվող տուփի վրա ակնհայտորեն երևում են բոլորի համար ծանոթ տուփի թափանցիկ և ոչ թափանցիկ մասերը և անցքի դեպի վեր բացվող կափարիչը: Բողոքարկողը նշում է, որ անհերքելի փաստ է նաև, որ բազմամյա օգտագործման հետևանքով այդ տուփը ձեռք է բերել տարբերակող հատկություն և ուրեմն համաձայն 11-րդ հոդվածի վերջին պարբերության կարող է գրանցվել որպես ապրանքային նշան:

Նշել է նաեւ, որ սկսած 2006 թվականի հունվար ամսից «FERRERO S.P.A.» ընկերությունը ներդրել է մոտ 28000 Եվրո «TIC TAC 3D» ապրանքի եռաչափավոր տուփերով վաճառքի օժանդակման նպատակով Հայաստանում: Բողոքում նշված է, որ 2001-2008 թվականների

ընթացքում Հայաստանի տարածքում վաճառվել է մոտ 485 ցենտներ TIC TAC տուփ, և քանի որ այդ տուփերը շատ թեթև են, հետևաբար վաճառվել է դրանց շատ մեծ քանակ:

Որպես ամփոփում իր բողոքի, բողոքարկողը գտնում է, որ ապրանքային նշանը ունի տարբերակիչ հատկություն եւ կարող է գրանցվել որպես ապրանքային նշան եւ խնդրում է վերանայել «Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների» բաժնի որոշումը:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2010 թվականի ապրիլի 8-ի կրկնական փորձաքննության որոշմամբ մերժել է «FERRERO S.P.A.» ընկերության «TIC TAC 3D» IR 405177 միջազգային գրանցման տարածումը Հայաստանի Հայաստանում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ապրանքային նշանը չունի տարբերակող հատկություն, այն սովորական տուփի պատկեր է:

Ընդհանուր քննարկման արդյունքում կոլեգիան հանգել է այն եզրակացության, որ բողոքում նշված փաստարկները համոզիչ են բողոքը մասնակի բավարարելու համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «FERRERO S.P.A.» ընկերության բողոքը մասնակիորեն եւ գրանցել «TIC TAC 3D» (IR 405177) ծավալային ապրանքային նշանը 30-րդ դասի հրուշակեղեն եւ քաղցրավենիք ապրանքատեսակների համար:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան